

ԱՍՏՂԵՐ ՇՈՂՈՒՆ...

(Նեկրասովից)

Աստղեր շողուն, աստղեր պայծառ,
Երկինք կապուտակ,
Շողշողում է և՛ խիտ անտառ
Հուննի շողի տակ:

Ջուրն է նայում, ջինջ հայելում
Անտառը նիրհած.
Անտառի լուռ թաւուտներում
Խաւարն է փռուած:

Հընձւորներ են թրփերի մէջ
Խումբ-խումբ նըստոտել,
Ծիծաղում են, խօսում անվերջ,
Խարոյկ բորբոքել:

Արօտներում մարդահասակ
Շըղթան ոտքերին,
Թափառում է մըթնում մենակ՝
Գիւղի ճերմակ ձին:

Եւ իր երգն է զիւ ըսկսում
Աշխոյժ երգասան,
Խըմբի միջից դուրս է վազում
Գիւղի ջահէլ տղան:

Գըդական առնում, օդն է նետում,
 Բըռնում—աչքը փակ.
 Հն, պարում է, հն թըռչկոտում,
 Սուլում, զերդ սոխակ:

Ձայն է տալիս երգին սիրուն
 Լորին մարգերում:
 Երգըն է գընում, մարում հեռուն,
 Արձակ դաշտերում...

Լըճեր փայլոն, հարթ-հաւասար,
 Անծայր, ճոխ վայրեր.
 Զըրածոցեր ջիւնջ ու պայծառ
 Ոսկի ճոխ արտեր:

Վերև—աստղեր, ներքև—դաշտեր,
 Եղէգնի պուրակ...
 Եւ բըղխում են սըրտից երգեր
 Ազատ, համարձակ:

Թարգմ. Ա.Լ. ԾԱՏՈՒՐԵԱՆ